



ՀՀ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հանրապետության տնտեսության ազատականացումը, հողի և գյուղատնտեսական արտադրության մյուս միջոցների, արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների, գյուղմթերքներ իրացնող և վերամշակող կազմակերպությունների մասնավորեցումը հուսալի նախադրյալներ են ստեղծել գյուղում առկա ներուժի արդյունավետ օգտագործման համար: Այդուհանդերձ, հաշվի առնելով ագրարային ոլորտի առանձնահատկությունները, ագրարային հատվածում ստեղծված իրավիճակը, ծառացած խնդիրների մասշտաբներն ու հրատապությունը, երկրի պարենային անվտանգության և գյուղական տարածքների զարգացման առաջնահերթությունը կարևորվում է գյուղատնտեսության և գյուղին պետական ակտիվ աջակցությունը: Այն առավելապես ուղղված է ագրարային ոլորտում իրավական հիմքի ձևավորմանը, գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար գործունեության և ներդրումների բարենպաստ պայմանների ապահովմանը, գյուղատնտեսության ենթակառուցվածքների զարգացմանը, արտահանման ուղղվածությունն ունեցող արտադրության խթանմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, սննդամթերքի անվտանգության և մասնագիտական խորհրդատվության համակարգերի զարգացմանը և այլն:

ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի, ծավալի ինդեքսի և համախառն ներքին արտադրանքի ցուցանիշները 2010-2015թթ.-ին

Ցուցանիշները	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
Գյուղատնտեսության համախառն արտադրանքն ընթացիկ գներով, մլրդ դրամ	636.7	795.0	841.5	919.1	993.5	1002.2
Գյուղատնտեսության արտադրանքի ծավալի ինդեքսը, %	86.4	113.9	109.5	107.1	107.2	111.7
Գյուղատնտեսության համախառն ներքին արդյունքը (ավելացված արժեքը), մլրդ դրամ	588.2	767.9	764.0	826.3	872.9	x)*
Գյուղատնտեսության մասնաբաժինը երկրի համախառն ներքին արդյունքի մեջ, %	17.0	20.3	19.1	19.6	19.7	x)*

* 2015 թվականի ցուցանիշը հրապարակված չէ:

Բուսաբուծություն

2014 թվականին գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են 332.76 հազար հեկտար նախորդ տարվա 318. 06 հազար հեկտարի դիմաց: Նախադրյալներ են ստեղծվել առաջիկա տարիներին նշված միտումը շարունակելու ուղղությամբ:

2014 թվականին գրանցվել է գրեթե բոլոր մշակաբույսերի համախառն արտադրանքի աճ՝ բացառությամբ ծիրանի:

2014 թվականին բուսաբուծական մթերքների արտադրության ծավալները բնութագրող տվյալները՝ ըստ ԱՎԾ-ի տվյալների, ներկայացվում են ստորև.

(հազ. տոննա)

Մթերքները	2013թ.	2014թ.	2014թ. 2013թվականի նկատմամբ, %
Հացահատիկ և հատիկաբլիթեղենային մշակաբույսեր	5 48.6	5 90.2	107.5
Կարտոֆիլ	6 57.4	7 32.7	111.4
Բանջարեղեն	8 45.1	9 23.2	109.2
Բոստան	2 08.0	2 45.7	118.1
Պտուղ և հատապտուղ	3 38.1	2 91.0	86.1
Խաղող	2 40.8	2 61.3	108.5

Վերջին տարիներին իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք նպատակաուղղված են հանրապետության գյուղատնտեսության հողային ռեսուրսների նպատակային օգտագործմանը, հացահատիկային տնտեսության զարգացմանը և հացահատիկային մշակաբույսերի ինքնաբավության մակարդակի բարձրացմանը: Մասնավորապես՝

1. «Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականների ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագիրը», որի շրջանակներում 2010 թվականից սկսած ներկրվել են և տեղական սերմարտադրողներից գնվել աշնանազան ցորենի էլիտային վերարտադրության սերմացուներ, որոնք հատկացվել են ծրագրի չափորոշիչները և պահանջները բավարարող շահառուներին՝ հաջորդ տարի 1:2 փոխհարաբերությամբ առաջին վերարտադրության սերմացու հետ վերադարձնելու պայմանով: Նրանց կողմից հետ վերադարձված սերմացուները տրամադրվում են մարզպետարաններին՝ պայմանագրային հիմունքներով մինչև 3 հեկտար հողատարածքի վրա ցանք կատարել ցանկացող գյուղացիական տնտեսություններին հատկացնելու համար:

2. «Հայաստանի Հանրապետության 2012-2017 թվականների աշնանազան ցորենի սերմնաբուծության, բարձր վերարտադրության սերմերի արտադրության զարգացման» և «Հայաստանի Հանրապետության 2013-2018 թվականների աշնանազան ցորենի սերմնաբուծության, բարձր վերարտադրության սերմերի արտադրության զարգացման» ծրագրերը, որոնց շրջանակներում 2012 և 2013 թվականներին հանրապետություն է

ներկրվել 20-ական տոննա աշնանացան ցորենի սուպերէլիտային վերարտադրության սերմացու, որը սահմանված կարգով սերմարտադրություն կազմակերպելու և աշնանացան ցորենի էլիտային վերարտադրության սերմացուներ արտադրելու նպատակով 2012 և 2013 թվականներին հատկացվել է 12-ական սերմարտադրող տնտեսավարող սուբյեկտների:

3. 2015 թվականին շարունակվում է գարնանացանի համար գարնանացան գարու, առվույտի, կորնգանի, եգիպտացորենի պետական աջակցության ծրագիրը, որի շրջանակներում սերմացուն հատկացվում է պետության կողմից ձեռք բերված արժեքից ավելի ցածր (սուբսիդավորված) գներով:

4. 2015 թվականի դեկտեմբերի 15-ին մեկնարկել է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագիրը, որն իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի ֆինանսավորմամբ և ՄԱԿ-ի բնապահպանական ծրագրի աջակցությամբ: Ծրագրի թիրախային տարածքներն են Արարատյան հարթավայրը, Սյունիքի մարզը, Սևանի ավազանը և հարող տարածքները: Վերոնշյալ տարածքներում նախատեսված գործողությունները մի կողմից կնպաստեն վայրի բուսատեսակների և կենսաբազմազանության պահպանմանը, մյուս կողմից հնարավորություն կստեղծեն համայնքների բնակչության եկամուտների աճի ավելացման և իրացման նոր շուկաների ներգրավման համար:

Այսպես՝ 2015 թվականին գարնանացան գարին ձեռք է բերվել 1կգ-ը 324.6 դրամով և հողօգտագործողներին տրամադրվել 130 դրամով, եգիպտացորենը՝ 932.5 դրամով, հողօգտագործողներին տրամադրվել է 350 դրամով, առվույտը ձեռք է բերվել 2695 դրամով, տրամադրվել՝ 1500 դրամով և կորնգանը ձեռք է բերվել 562.9 դրամով և տրամադրվել՝ 370 դրամով:

Առատ և բարձր բերքի ստացման երաշխիք է ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի համալիր պարարտացումը: Այդ նպատակով 2014 թվականից սկսած մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական, կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրի շրջանակներում, շուկայականից զգալիորեն ցածր գներով՝ 50 կիլոգրամանոց 1 պարկը 6000 դրամ արժեքով՝ ազոտական, 50 կիլոգրամանոց 1 պարկը 7000-ական դրամ արժեքով կալիումական և ֆոսֆորական պարարտանյութեր են տրամադրվում ՀՀ հողօգտագործողներին, կազմակերպություններին և ԼՂՀ-ին:

Միաժամանակ իրականացվում է նաև ՀՀ հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը, որի շրջանակում հողօգտագործողներին տրամադրվում է 1 լիտրը 350 դրամ արժեքով դիզելային վառելանյութ:

Վերջին տարիներին տնտեսավարողների մոտ լուրջ շահագրգռվածություն է նկատվում ջերմոցային տնտեսությունների կառուցման ուղղությամբ: ՀՀ մարզպետարաններից հավաքագրված օպերատիվ տվյալների համաձայն՝ 2014 թվականին հանրապետության տարածքում շահագործվում է 640 հա ջերմատուն, որից նորագույն տեխնոլոգիաներով՝ 23,7 հա: 2015 թվականի մարտի դրությամբ ջերմատների ընդհանուր տարածքը կազմում է 763,62 հա, որից նորագույն տեխնոլոգիաներով՝ 74,25 հա:

Ջերմատներում աճեցվում են լոլիկ, վարունգ, պղպեղ, սմբուկ, լոբի, կարտոֆիլ, ելակ, տարբեր կանաչիներ (տերևաբանջարներ): Սովորական տեխնոլոգիաներով շահագործվող ջերմատներում 1քմ բերքատվությունը տատանվում է 8-20կգ-ի

սահմաններում, իսկ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառող ջերմատներում՝ 40-50 կգ-ի:

2014 թվականին նախարարությունը ստացել է ջերմատների կառուցման 9 բիզնես-առաջարկ՝ շուրջ 50 հա-ի համար 79,63 մլն. դոլար վարկային միջոցների պահանջով, որոնք ՌԴ-ի բանկերի կողմից (ՎՏԲ) ակնկալվող վարկերից օգտվելու նպատակով ներկայացվել են ՀՀ կենտրոնական բանկ:

2015 թվականին Կոտայքի մարզում կավարտվի ժամանակակից տեխնոլոգիաներով շուրջ 51 հա ջերմատների կառուցումը, որից 46 հա-ն թաղանթապատ է, իսկ 5 հա-ն՝ ապակեպատ:

Արարատի մարզի Շահումյան համայնքում 2014-2015 թվականներին կառուցված 30 հա ջերմատներից բացի, նախատեսվում է ընդլայնել ևս 40-50 հա-ով:

ՀՀ կառավարությունը 2015 թվականի փետրվարի 12-ի նիստում հավանություն է տվել օրենսդրական փոփոխությունների նախագծի, որի համաձայն ջերմոցների կոնստրուկցիաների, ջերմոցային արտադրության մեջ օգտագործվող մի շարք ռեսուրսների ինչպես ներմուծումը, այնպես էլ ներքին շրջանառությունը կազատվեն ավելացված արժեքի հարկի վճարումից:

2014 թվականին «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրի շրջանակներում ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից պայքարի միջոցառումներ են իրականացվել 62025 հա տարածքի վրա հետևյալ բաղադրիչներով.

1. Պայքար մկնանման կրծողների դեմ՝ գարնանը և աշնանը ՀՀ մարզպետարաններին անհատույց հատկացվել է 6591.6 կգ «Ցինկի ֆոսֆիդ» մկնասպան թունանյութ, որով հողօգտագործողների միջոցով պայքար է իրականացվել առավել վարակված՝ 54930 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում:

2. Անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ՝ ավիացիայի միջոցով պայքարի միջոցառումներ են իրականացվել հանրապետության Արագածոտնի մարզի <<Արագածոտնի անտառտնտեսություն>>, Կոտայքի մարզի <<Հրազդանի անտառտնտեսություն>> և Վայոց ձորի մարզի <<Վայոց ձորի անտառտնտեսություն>> մասնաճյուղերի 6300 հա անտառային տարածքներում:

3. Վերջին տարիներին հանրապետությունում մորեխներով վարակվածության մակարդակը ցածր է: Ուժեղ վարակված օջախներում պայքարի միջոցառումները իրականացվել են համայնքների միջոցներով՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից անհատույց հատկացված միջատասպան միջոցով: 2014 թվականին Արարատի մարզի Պարույր Սևակ և Նարեկ համայնքներին հատկացվել է 119.25 լիտր միջատասպան միջոց, որով պայքարի աշխատանքներ են իրականացվել 795 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածքներում:

<<Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման ծրագրի>> շրջանակներում 2014 թվականին հետազոտվել են 172 համայնքների գյուղատնտեսական նշանակության 90173 հեկտար հողեր: Փորձաքննության արդյունքների հիման վրա կազմվել են 172 ագրոքիմիական քարտեզներ և մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրեր:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ 2014 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը կազմել է 993.4 մլրդ դրամ՝ գերազանցելով 2013 թվականի ցուցանիշը 7.2 %-ով, որից բուսաբուծական արտադրանքի արժեքը կազմել է 605.7 մլրդ դրամ, նախորդ տարվա մակարդակը գերազանցելով 6.6 %-ով:

ՀՀ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ ագրարային ոլորտի պետական կարգավորման ներկա փուլում առանձնակի կարևորվում է գյուղատնտեսության տեխնիկական և տեխնոլոգիական վերազինման, կարողությունների հզորացման ծրագրերի պետական աջակցությունը: Այդ նպատակով հատկացումների հաշվենկատ օգտագործումը երաշխավորում է բազմակի փոխհատուցում, երկրի պարենային անվտանգություն, գյուղական բնակչության զբաղվածություն և բարձր եկամտաբերություն:

Տնտեսության ագրարային ոլորտի, մասնավորապես՝ գյուղատնտեսության առանձնահատկությունները պահանջում են պետական միջամտություն և կարգավորում: Վերջիններս իրականացվում են վարչական և տնտեսական եղանակներով: Տնտեսական կարգավորման հիմնական գործիքները պետական աջակցության տարբեր ծրագրերն ու հարկային լծակներն են: Սույն հոդվածի շրջանակում իրականացվել է գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականության ՈԻԹՄՀ վերլուծություն, շեշտադրվել են ուժեղ և թույլ կողմերը, բացահայտվել սպառնալիքներն ու հնարավորությունները, որոնց հիման վրա առաջադրվել են ՀՀ գյուղատնտեսության պետական կարգավորման գործիքների և կառուցակարգերի կատարելագործման հայեցակարգային դրույթներ:

Ընդունված մեթոդաբանության համաձայն, հիմնախնդրի տրամաբանական ներկայացման նպատակով, պետք է տարանջատել վարչական և տնտեսական կարգավորման ուղղությունները: Պետական կարգավորումն առավել լիարժեք և բովանդակալից ներկայացնելու համար տնտեսական ուղղությունը ձևակերպվում են սոցիալ-տնտեսական, քանի որ սոսկ տնտեսական կարգավորումը կարող է ուղղվել նաև այնպիսի արդյունքների ձեռքբերմանը, որոնք էական սոցիալական արդյունավետություն չեն ապահովում: Մինչդեռ հայտնի, որ գյուղատնտեսության հիմնական առաքելությունը բնակչության պարենային անվտանգության ապահովումն ու բարեկեցության բարձրացումն է: Այս հիմնադրույթը հաստատելու համար նշենք, որ ներկայումս ՀՀ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության միջոցառումների և դրանց իրականացման ֆինանսական միջոցների զգալի հատվածը միտվում է ոչ այնքան ոլորտի զարգացմանը, որքան տնտեսական աճի խթանմանը: Մինչդեռ, գործոնային վերլուծությունը ցույց է տալիս, որ գյուղատնտեսական արտադրության ցածր եկամտաբերության, իսկ տարածաշրջանային կտրվածքով՝ վնասաբերության պայմաններում տնտեսական աճը չի կոռելացվում երկարաժամկետ հատվածում ոլորտի զարգացման և գյուղական բնակչության բարեկեցության բարձրացման ցուցանիշների հետ: Այսինքն՝ տնտեսական աճը միշտ չէ, որ վկայում է տնտեսական զարգացման մասին: Տնտեսական աճը ենթադրում է կարճաժամկետ հատվածում, հիմնականում միանգամյա ազդեցության գործոններով համախառն արտադրանքի ավելացում, այնինչ զարգացումը նպատակաուղղված է երկարատև ժամանակահատվածում կայուն արդյունավետության ապահովմանը: ՀՀ գյուղատնտեսության պետական կարգավորման գործող համակարգը դեռևս էական պայմաններ չի ստեղծում զարգացման նախադրյալների ձևավորման, ոլորտի մրցունակության ու եկամտաբերության բարձրացման համար: Տպավորությունն այնպիսին է, որ գյուղատնտեսության ճյուղի արդյունավետության գնահատման հիմնական ցուցանիշը տնտեսական աճն է, անկախ նրանից, թե դա որքանով է ազդում արտադրողների եկամուտների վրա: ՀՀ պաշտոնական վիճակագրությունը միայն ընտրանքային հարցումների արդյունքներով է ներկայացնում բնակչության տնտեսությունների ծախսերն ու եկամուտները, իսկ

գյուղատնտեսական գործունեության արտադրական ծախսերի և եկամուտների վիճակագրություն ընդհանրապես չի վարվում:

Գյուղատնտեսության ճյուղի կայուն զարգացման վրա դեռևս մեծ է բնական գործոնների ազդեցությունը: Այդ ռիսկերի կառավարման համար կարևոր նշանակություն ունեն երկարաժամկետ պետական աջակցության գործիքները, տեխնիկական, տեխնոլոգիական և ապահովագրական համակարգերի զարգացումը: Մինչդեռ, ՀՀ կառավարության ագրարային քաղաքականության միջոցառումների գերակշիռ մասը կրում են կարճաժամկետ, առանձին դեպքերում՝ էպիզոդիկ բնույթ, որի պատճառով գյուղատնտեսական սուբյեկտների կողմից ըստ արժանավույն չեն ընկալվում և ակնկալվող արդյունք չեն ապահովում:

Գյուղատնտեսական արտադրանքի ոլորտը խոցելի է և ենթակա մի շարք բնական և մարդածին ռիսկերի, որոնք զգալի բացասական ազդեցություն են թողնում գյուղատնտեսության վրա: Պարենային ինքնաբավությունը և պարենային անվտանգությունը 2010-2020թթ. Հայաստանի գյուղատնտեսական ռազմավարության գերակայություններն են հանդիսանում: Սույն ռազմավարության մշակման ընթացքում SWOT վերլուծություն է կիրառվել (աղյուսակ 1):

ՀՀ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցությունը բնութագրվում է ոչ միայն բյուջետային ֆինանսավորման բացարձակ մեծությամբ, այլև դրա կառուցվածքով և օգտագործման արդյունավետության ցուցանիշներով: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բյուջետային ֆինանսավորման ձևավորված չափաբաժնի շրջանակներում ծախսերի ուղղությունները հիմնականում հիմնավորված են: Այդուհանդերձ, ինչպես նշվեց, այսպիսի աջակցությունը դեռևս էական հիմքեր չի ստեղծում ոլորտի երկարաժամկետ զարգացման համար: Ուստի ներկայացնում ենք ՀՀ գյուղատնտեսության զարգացում ապահովող պետական կարգավորման քաղաքականության հիմնական ուղղություններն ու դրանց իրականացման կանոնակարգերը:

**ՀՀ գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականության ՈԻԹՄՀ
Վերլուծությունը**

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1. ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում կարևորվում է գյուղատնտեսության պետական աջակցությունը: 2. ՀՀ պետական բյուջեում առանձին տողով սահմանվում է գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի ֆինանսավորման գումարը: 3. ՀԲ-ն, ԳԶՄՀ-ն, ԱԶԲ-ն և այլ միջազգային տնտեսական կազմակերպություններ վարկային ծրագրեր են իրականացնում ՀՀ գյուղատնտեսության ոլորտում: 4. ԱՄՆ, Ճապոնիայի, ՉԺՀ, Հնդկաստանի, ԵՄ և այլ երկրների դրամաշնորհային ծրագրերը իրականացվել են ագրարային ոլորտում: 5. Համաֆինանսավորման սկզբունքով պետությունը մասնակցել է այդ ծրագրերին: 6. Գյուղատնտեսությունը հռչակվել է գերակա ոլորտ:	1. «Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի բացակայությունը: 2. Շահառուների կողմից պետական աջակցության ազդեցության ընկալման ցածր մակարդակը: 3. Պետական աջակցության և արտադրության վերջնական արդյունքների կապի թուլությունը: 4. Աջակցության գործիքների և կառուցակարգերի արդյունավետության ցածր մակարդակը: 5. Կոռուպցիոն ռիսկերը: 6. Վիճակագրական տվյալների և տեղեկատվության անբավարար հավաստիությունը: 7. Աջակցության ծրագրերին հատկացվող սահմանափակ միջոցները: 8. Աջակցության ծրագրերի անբավարար թափանցիկությունն ու հրապարակայնությունը: 9. Միջոցների արդարացի բաշխման առնչվող դժգոհությունները:
Սպառնալիքները	Հնարավորությունները
1. Գյուղատնտեսության ցածր մրցունակությունը: 2. Արտադրական ռեսուրսների (հող, ջուր, էներգիա և այլն) ոչ լիարժեք օգտագործումը: 3. Հողակտորների փոքր չափերը և մեծ կտրտվածությունը: 4. Պետության կողմից գյուղատնտեսության նկատմամբ «գերակա ոլորտին» յուրահատուկ հոգատարության բացակայությունը: 5. Արտահանման խթանման գործուն մեխանիզմների բացակայությունը: 6. Ներքին շուկայի սահմանափակությունը և թույլ պաշտպանվածությունը: 7. Կոռուպցիայի խթանման քաղաքականության բացակայությունը: 8. Պետական աջակցության միջոցների անարդյունավետ օգտագործումը: 9. Զրախնայողական քաղաքականության և կառուցակարգերի ցածր արդյունավետությունը: 10. Նորամուծական տեխնոլոգիաների ներդրման և արտաքին ուղղակի ներդրումների ներգրավման ոչ արդյունավետ քաղաքականությունը:	1. Թարմ և վերամշակված սննդամթերքի անարգել ու մեծածավալ արտահանումը ԵՏՄ երկրների շուկա: 2. ԵՏՄ երկրներից առանց մաքսատուրքի գյուղատնտեսական տեխնիկայի և այլ ներդրանքների ներմուծումը: 3. Չօգտագործվող հողային ռեսուրսների ներգրավումը արտադրական շրջանառության ոլորտ: 4. Արևահայաց լանջերի յուրացման արդիական տեխնոլոգիաների ներդրման ծրագրի իրականացումը: 5. Զրամբարների շինարարության և ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման պետական ծրագրի իրականացումը: 6. Կոռուպցիայի խթանման միջոցով փոքր տնտեսությունների փոքրածավալ արտադրանքի իրացման բացասական գործոնների հաղթահարումը: 7. Օրգանական թափոնների վերամշակման միջոցով էներգիայի և պարարտանյութերի արտադրության զարգացումը: 8. Փակ գրունտի բանջարաբուծության զարգացման ծրագրի իրականացումը: 9. Վենչուրային սկզբունքով ագրովերամշակման և ագրոսերվիսի զարգացումը:

1. Կառավարման համակարգը: ՀՀ գյուղատնտեսության պետական կարգավորման կատարելագործումը պետք է նպատակաուղղվի երկարաժամկետ հատվածում ճյուղի զարգացմանը: Վերջին երկու տասնամյակների ընթացքում ոլորտի կառավարման համակարգը բազմաթիվ փոփոխությունների է ենթարկվել, որոնք ոչ բոլոր դեպքերում են եղել օբյեկտիվ ու հիմնավորված: Ներկայումս ագրարային քաղաքականություն, ըստ ենթադրությունների, մշակում և իրականացնում են տարբեր պետական կառավարման մարմիններ՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը (գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն), ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը (գյուղական բնակավայրերի զարգացում, ոռոգման համակարգ), ՀՀ կառավարության աշխատակազմը (գյուղական կարողությունների և շուկայավարման հնարավորությունների ընդլայնում), ՀՀ կառավարությանը կից անշարժ գույքի պետական կադաստրը (հողային ռեսուրսների պահպանության և արդյունավետ օգտագործման մշտադիտարկում), ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը (ագրովերամշակման և լոգիստիկ համակարգի զարգացում), ՀՀ գիտության և կրթության նախարարությունը (գիտական ապահովում և մասնագիտական կադրերի պատրաստում), ՀՀ կենտրոնական բանկը (ապահովագրության և վարկավորման քաղաքականություն) և այլն:

2. Իրավական հիմքերը: Հանրապետությունում գոյություն չունի որևէ իրավական ակտ, որով սահմանված լինեն պետական ագրարային քաղաքականությունը, դրա նպատակները, սկզբունքները, ուղղությունները և, ընդհանրապես, ագրարային ոլորտում պետության պատասխանատվությունը և պարտավորությունները: Հրամայական պահանջ է դարձել գյուղատնտեսության ոլորտում վերաիմաստավորել պետության դերը՝ պասիվ բարեփոխողից վերածելով երկրի կայուն զարգացման մասնակցի և պատասխանատուի: Անհրաժեշտ է ձևավորել գյուղատնտեսության պետական աջակցության ամբողջական համակարգ: Տարբեր բնույթի սուբսիդիաների, դոտացիաների և արտոնությունների տրամադրումը պետք է դարձնել ագրարային քաղաքականության հիմնական նպատակը և բովանդակությունը: Այս բացը լրացնելու համար անհրաժեշտ է ընդունել «Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքը, որով կսահմանվի.

- ☐ գյուղատնտեսության և գյուղի զարգացման պետական քաղաքականությունը, դրա նպատակները, սկզբունքները, ուղղությունները, իրականացման միջոցները,
- ☐ պետական քաղաքականությունը գյուղատնտեսական արտադրանքի, հումքի և պարենամթերքի շուկայի կարգավորման բնագավառում,
- ☐ գյուղատնտեսության ոլորտին պետական աջակցության տրամադրման սկզբունքները, ուղղությունները և մեխանիզմները,
- ☐ գյուղատնտեսության և գյուղի զարգացման պետական ծրագիրը, դրա հաստատման կարգը և իրականացումը,
- ☐ պետական ծրագրի ընթացքի և արդյունքների մասին ազգային զեկույցը, դրա բովանդակությունը և ներկայացման կարգը,
- ☐ գյուղատնտեսության և գյուղի զարգացման բնագավառներում տեղեկատվական համակարգի ձևավորումը:

3. «Գյուղատնտեսության և գյուղի զարգացման պետական ծրագրի» ընդունումը:

Ծրագրով պետք է սահմանվեն երկարաժամկետ հատվածում (տասնամյա) գյուղատնտեսության զարգացման և գյուղատնտեսական արտադրանքի, հումքի ու

պարենամթերքի շուկայի կարգավորման նպատակները, խնդիրներն ու հիմնական ուղղությունները, կանխատեսումների վրա հիմնված գյուղատնտեսության զարգացման հիմնական ցուցանիշները, ըստ առանձին տարիների իրականացվելիք միջոցառումները, ակնկալվող արդյունքները՝ քանակական և որակական ցուցանիշները, միջոցառումների համար պահանջվող ֆինանսական միջոցները: Պետական ծրագիրը պետք է մշակի լիազոր մարմինը և մինչև պետական ծրագրի առաջին ֆինանսական տարվան նախորդող տարվա հուլիսի մեկը ներկայացնի Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը: Պետական ծրագրի ֆինանսավորման կայունությունը և շարունակականությունը երաշխավորելու համար անհրաժեշտ է սահմանել դրույթ, որով կամրագրվի ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսության ոլորտի ֆինանսավորման հարաբերական (տոկոսային) չափը՝ պետական բյուջեի ընդհանուր ծախսերի կամ գյուղատնտեսության համախառն արտադրանքի նկատմամբ: Լիազոր մարմինը յուրաքանչյուր տարի մինչև մայիսի մեկը, պետք է նախապատրաստի և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնի նախորդ տարում պետական ծրագրի իրականացման ընթացքի ու արդյունքների մասին հաշվետվությունը կամ ազգային զեկույցը, որը կքննարկվի և կհաստատվի մեկամսյա ժամկետում: Հաստատված ազգային զեկույցը քսանօրյա ժամկետում կներկայացվի Ազգային ժողով, որը կլսվի հերթական նիստում:

4. Վարչական ռեգիստրի վարումը: Կառավարման արդյունավետությունն էապես կախված է ոլորտի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության ստացումից և տիրապետումից: Ներկայումս ՀՀ ԱՎԾ-ի կողմից գյուղատնտեսության ոլորտում վարվում է վերլուծական վիճակագրություն: Այսինքն՝ վիճակագրական տվյալների հավաքագրումը չի կատարվում ըստ տնտեսվարող սյուբեկտների, համայնքային ամփոփ տվյալների և ընտրանքային հետազոտությունների արդյունքների ընդհանրացման, որը ընդհանուր վիճակագրության առումով ընդունելի, սակայն բավարար չէ համակարգի մանրակրկիտ վերլուծության, իրատեսական քաղաքականության մշակման և իրականացման, ինչպես նաև հասցեական պետական աջակցության ու դրա արդյունքների գնահատման համար: Ուստի առաջիկա 1-2 տարիների ընթացքում անհրաժեշտ է ստեղծել գյուղատնտեսական վարչական վիճակագրական ռեգիստր:

5. Ռազմավարական հետազոտությունների կենտրոն: ՀՀ ագրոպարենային համալիրի արդյունավետ կառավարումը պահանջում է հիմնել ռազմավարական հետազոտությունների կենտրոն, որը պետք է վերլուծի ագրարային քաղաքականության արդյունքները, մշակի ոլորտին վերաբերող օրենքների, կանոնակարգերի, հայեցակարգերի նախագծեր, նորարարական և ներդրումային ծրագրեր, ինչպես նաև ներկայացնի ոլորտի կարողությունների հզորացման միջազգային համագործակցության վերաբերյալ առաջարկություններ:

6. Քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը: Կառավարման արդյունավետության բարձրացման համար կարևոր և անհրաժեշտ է ապահովել քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը գյուղատնտեսության ոլորտի քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում: Այդ նպատակով պետք է ներդնել քաղաքականության մշակման առանձին աշխատանքները կառավարության կողմից հասարակական կազմակերպություններին պատվիրելու մեխանիզմը: Բացի այդ,

ոլորտի զարգացման համար հիմնարար նշանակություն ունեցող օրենքների, որոշումների, ռազմավարական ծրագրերի և հայեցակարգերի նախագծերը մինչև ՀՀ

կառավարություն ներկայացնելը պետք է քննարկել շահագրգիռ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

7. Գյուղատնտեսական կոոպերացիա: Արտադրության համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, երաշխավորված գնով արտադրանքի իրացման, գյուղատնտեսական տեխնիկայի, վառելիքի, պարարտանյութերի մատակարարման, գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման, ինչպես նաև գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների ներդրման գործընթացների արդյունավետ կազմակերպումը հնարավոր է ապահովել գյուղատնտեսական կոոպերատիվների միջոցով: Կոոպերատիվները կարող են նաև զգալիորեն նպաստել ագրարային հատվածի և տնտեսության մյուս ճյուղերի միջև տնտեսական կապերի ձևավորմանը և զարգացմանը: Այս ոլորտում պետության քաղաքականությունը պետք է նպատակաուղղել գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման գործում պետական աջակցության տարբեր մեխանիզմների կիրառմանը, մասնավորապես՝ պետական աջակցության շրջանակներում գյուղացիական տնտեսություններին տրամադրվող տարբեր սուբսիդիաներն ու դրամաշնորհները հատկացնել կոոպերատիվների միջոցով:

8. Երաշխավորված գին: Անհրաժեշտ է սահմանել կարևորագույն գյուղատնտեսական արտադրատեսակների (հացահատիկ, միս, կաթ) իրացման երաշխավորված գներ: Որոնք տարվա ընթացքում կարող են ճշգրտվել՝ հաշվի առնելով արձանագրված գնաճի տեմպը: Երաշխավորված գների սահմանման համար անհրաժեշտ է հիմք ընդունել երկրի բարենպաստ բնակլիմայական պայմաններում արտադրված կարևորագույն գյուղատնտեսական մթերքների հաշվարկված ինքնարժեքը: Անբարենպաստ պայմաններում գյուղատնտեսական մթերքների արտադրության համար կհատկացվեն լրացուցիչ դոտացիաներ: Տարվա ընթացքում ֆերմերային տնտեսությունները ազատ են իրենց արտադրանքի տնօրինման հարցում և այն կարող են վաճառել շուկայական գներով, որոնք հնարավոր է լինեն երաշխավորված գնից բարձր, ցածր կամ հավասար: Իրացման գինը երաշխավորված գնից ցածր լինելու դեպքում տարվա վերջում ֆերմերային տնտեսությունը կստանա փոխհատուցում նշված տարբերության չափով: Շուկայում երաշխավորված գնով իրացման ենթակա հիմնական գյուղատնտեսական արտադրանքի ավելցուկի առաջացման դեպքում կառավարության կողմից իրականացվի դրանց ինտերվենցիոն գնումը երաշխավորված գնով և կապահովվի գնված ապրանքների հետագա տնօրինումը՝ պահպանումը, վերամշակումը, իրացումը, փոխանակումը և այլն:

9. Արտահանման խթանումը: Արտահանման ուղղվածություն ունեցող և արտաքին շուկայում մրցունակ արտադրանք արտադրող կազմակերպություններին հարկ է տրամադրել վարկային երաշխիքներ, դրամաշնորհներ և տեխնիկական օժանդակություն: Առավելապես նախընտրելի են՝ պտուղ-բանջարեղենի վերամշակման, գինեգործական, օրգանական գյուղատնտեսական մթերքների, չոր մրգերի, կաթնամթերքի և մսամթերքի առանձին տեսակների, թարմ մրգերի, արտադրության, հետբերքահավաքային տեխնոլոգիաների կատարելագործման և կարողությունների հզորացման, մանր եղջերավոր անասունների արտահանման, շուկայահանման ենթակառուցվածքների զարգացման և ներդրումների խթանման ծրագրերը:

10. Գյուղատնտեսության տեխնիկական վերազինումը և տեխնիկայի արդյունա-

վետ օգտագործումը: Գյուղատնտեսության տեխնիկական ապահովվածության ներկա վիճակը, հատկապես առկա տեխնիկայի ծայրաստիճան մաշվածությունը և նորացման միանգամայն անբավարար տեմպերը, հիմք են տալիս կանխատեսելու, որ առաջիկա տասնամյակի վերջում ինտենսիվ մշակության չի ենթարկվի վարելահողերի 55-60 տոկոսը: Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

□ յուրաքանչյուր տարի հանրապետություն ներմուծել 500 հատ տրակտոր, 40 հատ հացահատիկահավաք, 60 հատ կերահավաք կոմբայն և տրակտորների ագրեգատավորման նվազագույն նորմաներին բավարարող քանակությամբ գյուղատնտեսական գործիքներ. այս քանակությամբ տեխնիկայի ներկրումը պահանջում է տարեկան 10 մլրդ դրամ (ներկայումս շուրջ 165հազ. հա վարելահողերի ոչ նպատակային օգտագործման պատճառով տարեկան պակաս է արտադրվում ավելի քան 200 մլրդ դրամի համախառն արտադրանք),

- պետություն-մասնավոր հատված գործընկերության զարգացման ընդունելի տարբերակների (լիզինգ կամ տարաժամկետ վճարում, վարձակալություն, կոոպերացիա և այլն) կիրառումով ներմուծված տեխնիկան հատկացնել գյուղական համայնքներին, սպառողական կոոպերատիվներին և առևտրային գյուղատնտեսական ձեռնարկություններին,
- պետական աջակցություն ցուցաբերել մեխանիզատորական և գյուղատնտեսական տեխնիկայի նորոգման կադրերի պատրաստմանն ու վերապատրաստմանը, շարժական տեխնիկական օգնության ծառայությունների զարգացմանը,
- հողի նվազագույն և գրոյական (անվար) մշակության տեխնոլոգիայի ներդրում և այդ նպատակով՝ համապատասխան գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման աջակցություն:

11.Ագրարային ոլորտի արտաքին տնտեսական կապերի զարգացումը: Ագրարային ոլորտի արտաքին տնտեսական կապերի զարգացումը, որոշակի առանձնահատկություններով հանդերձ, հիմնականում պայմանավորված է երկրի արտաքին տնտեսական քաղաքականությամբ: Մասնավորապես՝ ԱՀԿ անդամության շրջանակում Հայաստանն օգտվում է Ազգերի առավել բարենպաստության ռեժիմից, բացի այդ ազատ առևտրի համաձայնագրեր ունի Վրաստանի և ԱՊՀ երկրների հետ, բացառությամբ Ադրբեջանի և Ուզբեկստանի: Ներկայումս խիստ կարևորվում է ԵՏՄ-ին անդամակցության և Հայաստան-Եվրոպական միություն խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի ստորագրումից հրաժարվելու պայմաններում չկորցնել Եվրոմիության հետ համագործակցության եզրերը: Հայաստանն օգտվում է Եվրոմիության (GSP+)՝ «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգից», որը հնարավորություն է տալիս տեղական ծագման շուրջ յոթ հազար ապրանքատեսակ ԵՄ շուկա արտահանելու գրոյական կամ նվազեցված մաքսատուրքերով: Արտաքին տնտեսական ակտիվության տեսանկյունից, կարևորվում է մրցունակ ենթակառուցվածքների ապահովման խնդիրը: Ենթակառուցվածքների արդիականացումն իրականացվում է համապատասխան ոլորտային ծրագրերով: Մասնավորապես՝ տրանսպորտային ենթակառուցվածքում կարևորագույն են համարվում Հյուսիս-Հարավ ավտոճանապարհի, Իրան-Հայաստան երկաթգծի, «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի հարակից տարածքում միջազգային լոգիստիկ կենտրոնի ազատ տնտեսական գոտու ծրագրերը:

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյուղատնտեսությունը համարվում է ցանկացած երկրի տնտեսության կարևորագույն և ռազմավարական ճյուղը, քանի որ ազգաբնակչությանն ապահովում է առաջին անհրաժեշտության պարենային ապրանքներով: ՀՀ գյուղատնտեսության ճյուղը տարիների ընթացքում բարելավվում է, որին նպաստում է ինչպես պետական, այնպես էլ միջազգային կազմակերպությունների աջակցությունը: Հոդվածը նվիրված է ՀՀ գյուղատնտեսության ճյուղում առկա հիմնախնդիրների բացահայտմանը և դրանց լուծման ուղիների ներկայացմանը:

Գյուղատնտեսությունը ցանկացած երկրի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևորագույն ճյուղերից է: Վերջինս ունի ռազմավարական նշանակություն երկրի տնտեսական անվտանգության տեսանկյունից, քանի որ բնակչությանն ապահովում է պարենով, իսկ սննդարդյունաբերությանը՝ հումքով: Գյուղատնտեսությունը համակարգաստեղծ ճյուղ է, որի զարգացումը նպաստում է ինչպես սննդի և թեթևարդյունաբերության, այնպես էլ ոլորտը սպասարկող արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը: Ավելին, գյուղատնտեսության ճյուղի զարգացման համար անհրաժեշտ է տնտեսության մյուս ճյուղերի զարգացման ապահովումը, և այս առումով, հարկ ենք համարում ներկայացնել ՀՀ տնտեսության մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները և վերլուծել դրանք:

Համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների՝ վերջին չորս տարիների ընթացքում ՀՀ տնտեսությունը բարելավվել է, մասնավորապես՝ երկրի ՀՆԱ-ն 2010թ. աճել է 2.2%-ով, 2012թ.՝ 7.2%-ով, իսկ 2013թ.՝ 3.5%-ով՝ կազմելով 4266.79 մլրդ դրամ: Այդ նույն ժամանակահատվածում ՀՆԱ ինդեքս դեֆլյատորը, համապատասխանաբար՝ 107.8%, 98.8% և 103.2% է, իսկ սպառողական գների ինդեքսը (ՄԳԻ), համապատասխանաբար՝ 108.2%, 102.6% և 105.8%: Միաժամանակ, միջին անվանական աշխատավարձը 2013 թ. նախորդ տարվա նկատմամբ աճել է 106.5%՝ կազմելով 158967 դրամ, իսկ 2008թ. այդ ցուցանիշը եղել է 87406 դրամ: Գործազրկության մակարդակը 2008-2013 թթ. ընթացքում միջինը 17.7% էր, իսկ 2013թ.՝ 16.2%, և, ինչպես նկատվում է, 2010-2013թթ. գործազրկության ակարդակը տարեցտարի նվազում է, որը կապված է ինչպես աշխատատեղեր ստեղծվելու, այնպես էլ ՀՀ-ից բնակչության արտագաղթի (2013թ. սահմանահատման հաշվեկշիռը -32205 մարդ է) հետ: Ուսումնասիրելով ՀՀ արտաքին առևտրաշրջանառության վիճակագրական ցուցանիշները՝ կարելի է փաստել, որ 2008-2013թթ., բացառությամբ՝ 2009 թ., գրանցվել է աճի կայուն դինամիկա. 2008 թ. աճը 24.1% է, 2010թ.՝ 18.8%, իսկ 2013թ.՝ 5.6%: Նշենք, որ 2009թ. գրանցվել է 26.5% անկում, որը պայմանավորված է եղել համաշխարհային տնտեսական ճգնաժամով, որի հետևանքով արտահանման ծավալը կրճատվել է 32.8%-ով (2008թ. այդ ցուցանիշը եղել է 8%), իսկ ներմուծումը՝ 25%-ով:

Նշենք, որ գյուղատնտեսության ճյուղը բաժանվում է երկու հիմնական ենթաճյուղերի՝ բուսաբուծություն և անասնաբուծություն: Ըստ պաշտոնական վիճակագրության 2008-2013թթ. տվյալների՝ բուսաբուծության ենթաճյուղի համախառն արտադրանքը աճի կայուն միտումներ է դրսևորել, բացառությամբ՝ 2009-2010թթ., երբ գրանցվել է 0.7% և 20.3% անկում: Այսպես՝ 2008թ. բուսաբուծության ենթաճյուղի համախառն արտադրանքի աճի տեմպը 100.2% է (424.3 մլրդ դրամ), 2011թ.՝ 126.6%, 2012թ.՝ 114% և 2013թ.՝ 106.6% (578.9 մլրդ դրամ):

ՀՀ ցանքատարածությունների թիվը, ինչպես նաև համախառն բերքը տարեցտարի աճում են, ինչը, բնականաբար, նպաստում է բուսաբուծության ենթաճյուղի համախառն արտադրանքի ավելացմանը և գյուղատնտեսության ճյուղի զարգացմանը: Այսպես՝ եթե 2009թ. ցանքատարածությունները 300 հազար հա էին, ապա 2013թ. այդ ցուցանիշը աճել է 6%-ով՝ 318 հազար հա: Ընդ որում, հացահատիկային և հատիկալնդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունները 2013թ. 2009թ. նկատմամբ աճել են 4%-ով՝ կազմելով 174 հազար հա, բերքատվությունը ավելացել է 36.3%-ով, համախառն բերքը՝ 46.4%-ով:

Ներկայացված վիճակագրական տվյալները վկայում են բուսաբուծության, ինչպես նաև գյուղատնտեսության ճյուղի զարգացման մասին: Նշենք, որ բուսաբուծության ճյուղի զարգացումը նպաստում է սննդարդյունաբերության, մասնավորապես՝ պահածոների արտադրության զարգացմանը և արտադրանքի ծավալների ավելացմանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ պարենային ապրանքները, հատկապես՝ պտուղ-բանջարեղենը, խաղողը, իրենց որակական և համային հատկանիշներով բավական բարձրորակ են, ուստի ունեն մեծ պահանջարկ ինչպես ներքին շուկայում, այնպես էլ արտերկրում:

Գյուղատնտեսության ճյուղը բարձր ռիսկային է, ուստի պարենային անվտանգության ապահովման համար կարևոր է բնական աղետների կանխարգելման միջոցառումների իրականացումը, ինչը հնարավոր է պետական աջակցության շնորհիվ: Նշենք, որ վերջին տարիներին մեծ ներդրումներ են կատարվում ՀՀ մարզերում հակակարկտային կայանքների տեղադրման համար, ինչի արդյունքում փոքր-ինչ նվազել են կարկտահարության վնասները:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Սույն Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):